ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ

ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի հաշվետու համայնքային ժողովի

16.12. 2011թ. Գյուղ Թեղենիք

2011 թվականի 16-ը դեկտեմբերի տեղի է ունեցել Թեղենիք համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Արթուր Մկրտչյանի
2. Գոռ Ներսիսյանի
3. Թովմաս Հովհաննիսյանի
4. Միհրան Սուքիասյանի
5. Սարգիս Ներսիսյանի

Թեղենիք համայնքի ղեկավարի աշխատակազմից

1. Աշխատակազմի քարտուղար՝ Մաքրուհի Պետրոսյան
2. Առաջատար մասնագետ Մարգարիտ Կիրակոսյան
3. Առաջատար մասնագետ Գոհար Մուրադյանի
4. Առաջին կարգի մասնագետ Նաիրա Ոսկանյանի

Թեղենիք համայնքի բնակիչներ

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին

2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

1. Ֆինանսական բնագավառ

Թեղենիք համայնքի բյուջեի մասին

2011թ. համայնքի բյուջեում

	նախատեսվել է	9 ամսում հավաքագրվել է
հողի հարկ	- 1.270.4	1.116.7 դրամ
գույքահարկ	- 1.282.8	1.219.3 դրամ
հողի վարձավճար	- 500.0	453.3 դրամ

որը կազմում է 91.36%

Աշխատանքի և սոցիալական ծառայությունների բնագավառ

օգնության համար նախատեսվել է - 0 դրամ

Համայնքի ղեկավարի աշխատակազմում և բյուջետային հիմնարկներում ունենք թվով 8 աշխատող: Բյուջեից հատկացված է 5978.8 դրամ աշխատավարձի ֆոնդ և 10.14.1 դրամ սոց. վճարի ֆոնդ: Աշխատավարձի և սոց վճարի պարտքեր չունենք:

Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանման բնագավառ

Ներկայացվեց, որ գարնանը կատարվել է մաքրման և աղբահանության աշխատանքեր:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2011թ. համայնքի տարածքում կառավարության կողմից, պետականբյուջեից հատկացվել է 10.000.0 մլն. դրամ նոր ջրագիծ անցկացնելու համար:
«Հայ ջրմուղ կոյուղի » ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենի կողմից կատարվել է 10.000.0 մլն. դրամի ներդրում համայնքի տարածքում՝1000մ ջրագիծ անցկացնելու համար:

Հողօգտագործման բնագավառ

Աճուրդ վաճառքով օտարվել է 3.7 հա արոտավայր հողատարածք :
Համայնքի ղեկավարը խնդրեց ազգաբնակչությանը պարտաճանաչ լինել հարկերի վճարման գործում, որպեսզի հնարավոր լինի ավելի շատ ծրագրեր իրականացնել համայնքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչների կողմից եղան առաջարկություններ, որից ելնելով

ՈՐՈՇՎԵՑ

1. Առաջիկայում ձեռնամուխ լինել մշակույթի տան, մսուր մանկապարտեզի տանիքի վերանորոգման և պատուհանների տեղադրման աշխատանքներին:

2. Հնարավորինս կատարել ասֆալտապատման և ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

3. Համայնքի տարածքում լուսավորության անցակացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ